— Բոլորովին ուղիղ է ձեր խօսքը, տէր Հայր, — ասաց քեռի Պետրոսը: — Մելիքը Պարսկաստան գալուց յետոյ, նա երկար ժամանակ իր գաղտնի նպատակներով կարողացաւ թաքնուած մնալ որսորդի անուան տակ, բայց երբ որ նկատեց, թէ այնտեղ եւս պէտք է մերկացնի ինքը, նա թողեց Սալմաստը եւ անցաւ Հաղբակ: Ժողովուրդն այնտեղ ռամիկ էր եւ կիսավայրենի, իսկ մի այսպիսի ժողովուրդ պէտք էր նրան: Նա շուտով կարողացաւ գրաւել ռամկին եւ բոլորի հաւանութեամբ նոյն գաւառի «միր» ընտրուեցաւ: Այնուհետեւ խռովութիւնը այս երկրից պակաս չէ: Հասպիստանու կռիւը իր յաջողութեամբ խրախոյս տուեց նրան. այժմ նա իր նպատակին մասամբ հասել է եւ կամենում է Հաղբակայ լեռների վրայ այն խաղը խաղալ, ինչ որ խաղում էր մի ժամանակ Սասնոյ մէջ:

— Այսպիսի մարդիկը ժանտախտ են, ուր եւ գնում են, իրան հետ տանում են մահ եւ կոտորած, — ասաց տէրտէրը:

— Եթէ ծերունի որսորդի միտքն այն է, — պատասխանեցի ես, — որ հայը ազատուած լինի օտարի լծից, որ նա իր տունը, իր երկիրը ինքը կառավարէ, դրա մէջ ես մի վատ բան չեմ տեսնում: Եւ ես ինքս կը լինեմ առաջինը, որ կը նոիրեմ իմ արիւնը նրա նպատակին :

— Եւ դու ինքդ կը լինես առաջին խելագարը... — լսելի եղաւ մի նոր ձայն:

Ես մինչ այն աստիճան խռովութեան մէջ էի, որ ամենեւին չէի կարողացել նկատել, որ մի վարդապետ ներս էր մտած քեռի Պետրոսի վրանում եւ ականջ էր դնում մեր խօսակցութեանը: Դա միեւնոյն աբեղան էր, որին ցերեկով տեսած էի «Կաթնաղբիւրի» ձորում: Նա եկաւ նստեց: Քեռի Պետրոսի եւ տէր Թոդիկի ընդունելութեան ցոյցերից երեւաց, որ չափազանց յարգանք ունէին դէպի հայր սուրբը: Ճրագի լոյսով ես աւելի լաւ կարողացայ զննել նրան: Նա մի մարդ էր ալեխառն մօրուքով եւ նոյնպէս դեռ նոր ճերմակած երկայն մազերով: Հագուստը խիստ անշուք էր, այնպէս հագնում են միայն անապատական ճգնաւորները: Ինչ որ նշանաւոր էր նրա կերպարանքի մէջ, դոքա էին կենդանի եւ կրակոտ աչքերն, որոնք իրանց առոյգութեամբ մի յայտնի բացառութիւն էին կազմում նրա զառամեալ հասակի մէջ:

Նա, առանց ինձ վրայ ուշադրութիւն դարձնելու, սկսեց խօսել քեռի Պետրոսի եւ տէրտէրի հետ: Քանի րոպէից յետոյ ես ինձ բոլորովին աւելորդ զգացի նրանց հասարակութեան մէջ, մանաւանդ երբ նշմարեցի, որ իմ ներկայութիւնը նրանց հաճոյ չէր. ուստի բարի գիշեր ասելով, հեռացայ: